

ԿԱՇԱՋ

Գիրն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒՆԻ 30-ին. Թիֆլիս. №31
ԴՐՈՒՅԹԻ ԽՆԵԼ ՊԱՐՍԿԱՍԱՆՈՒՄ



(Ներքինին ներս վաղելով)

Ձերդ կայսերական մեծութիւն ԴԱՐԱՇՆ գալիս է. խելօք կաց,
Վա՛, դո՞ք,

ԱՆՏԵՍԻԽՈՎԱ
Կրապեներին

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI
Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI
Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրդան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաշոր գործիչ-կորպիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բեր բայց բառանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆեիդ ուզի:

Հայոցն՝ Տիֆլիս Մազեննայի պեր, բարձրագույն պատուական գործադիր և առաջարկահանդիսական գործադիր է:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագրի-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱ» ՕՐԵՑՈՅՑ

1911 ՅՈՒՆԻՍ 31 օր

30

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հայոց

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

31 (կիր.) Տօն դալաքաց ամենայնից, որք ամելի միով հարածած և սպիտակ արասի էշի մէջն բազում երիտասարդաց հայոց շունչ ու հոգի տան, դերասան կարգեն և այսպիսով գեղարքւածի տաճարն հայոց բարգաւաճեն:

Օգոստ. 1 (թ. շ.) Երազս ամենայն, որ տեսանիցն ը մէջ դայսմ գիշերի, ի բարեն կատարեսցի: Այսպէս եթէ մեծօկան գանձն տեսանիցն, պարզապես առենալ առենալ հանպայ:

2 (թ. շ.) Տիշատակ մեսելոց Ռւսուցական Միութեան ժամանակաւոր ընթրուի, որ որպէս կարգամք ի մէջ գաղէթաց, դալալանաց մի-մի մանէթ առենալ, ամառայ ընթացքում վասն չորեց (շրացած մի կարծէք) ուսուցչաց պաշտօն գըտեալ է:

3 (թ. շ.) Զայսօր ի մէջ լրագրաց 12 յօդածն երևացի վասն սրբազն Օրմանեանի և «Օրմանեան» բառն ապասէրեն հայոց յընթացս միոյ ժամու 25 անգամ հոլովեցնեն: Սակայն դինչ և անիցն 2X2=4-ի:

4 (թ. շ.) Ի մէջ օրաց. մեր ինդրեն տպել հետեւ ստատիստիքան և բարեկան առևերեն ձրի ներկայացմանն եկեալ էին 125 հայ, 8 լրաց, 7 ոռու և 3 թուրք: Եւ զեռ համարձակին առել, թէ հայ մարդն գեղարւեստի տաճարն ոչ սիրէ:

5 (ուրբ.) Զայս գիշեր ի վերայ բեմին չաւլաբառու խաղացին «Փթած սահմանադրութիւնն Պարսկաստանի» հօմերիս 3 արարւածաւ, կամ «Սարսահման» էքս-Շահի ջէրում պատմական դրամա 6 գործող:

Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ
Փարհեմուզ

ՇՈՒՔԵՐԻ ԶՈՐՈՒԹԻՆԸ ԿԱԹԱԼՈՍԱՅԻՆ
ՀՅՈՒՑԵՐՈՒ ՎՐԵՆ

Շուքիրն էլ իրէնց զօրութինն ին ունեցի կաթղկոսական խնթըներու վրէն: Մէ-մէ ջէր շուքիրը ուրիշ բաներու վրէն էլ ին զօրութին ունենում:

Այ շուքիրը վուր նընդնում է միրքեր համանում ին, խոտերը էրում է, շատ ջէր լաւ-լաւ բանիրն էլ փթում ին:

Շուքիրը խանդիսան մտքերու վրէն էլ ին զօրութին անում:

Էտու համա էլ մարթիք կօջոր ին գնում:

Ավրակներու համա ասում ին է վկօջոր է», կօսէ:

Չունքի սրանք շուքին չին դիմանում, էդու համա էլ վիր վիր ին գնում:

Ու Տէրը փրկէ աղատէ, թէ օքմինին շուքը զօր տայ՝ քաղքում ան թեհրանում:

Կաթղկոսական խնթըներու վրէն փիքը անելիս խծ—էլ պրծնում չկայ: Կօջոր է կօջոր:

Պրօֆեսուր դոխտոր Բազիլի անումը իմացել էք:

Իմացած կուլէք:

Արա խիղճը, շուքեմէն հեսարի է բռնւի, ու կօջոր-կօջոր է դառի, վուր հիմի «Մշակի» մէջ արթուրմաներ է խաղում, թուզկոտում:

Խանդիսան ուրիշ թաւուր խասիա-



«ԽԱԹԱԲԱԼԱ» 1911 թ.

ԲԱԺԱՆԵԳԻՆՆԵ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 ր.
Երեք ամիսը	1 ա 50 կ.
Ամիսը	50 ր.
Թիֆլիսում տարեկան	4 ա 5 ր.

Մեր թերթի բաժանորդագրւել ցանկացողին «Սուրհանդական» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրւել ցանկացողին
75 % զեղչ:

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիկայր:

Թի վրայ էլ է ընկնում:

Ասինք կաթղկոսական խնդիրներն էլ պակաս շարուա ու գալիղարաբուա չին: Իմ սակութար աչքիրով տեհիլ իմ, թէ ինչպէս կաթղկոսական խնթիրքներու համա, մեր խալիսի միջի ապրողներն էլ խանդիսան ափրակացի ին, համա, մեռնիմ էլի սուփ էջմիածնի զօրութինին—վիրջը խիթի ին էկի:

Զօրութինը ուրիշ է:

Այ հիմի պրօֆեսուրը դոխտուր բաղւը:

Վա, համա կօջոր է:

Էտինց էլ պաէր ըլէք:

Մէ խիղճ մարթը, վուր կաթղկոսական խնթրով փիքը անէ շուտ շուտ, Օքրուղնա ան փունիկուլոր պիտի ըլէք:

Պրօֆեսուրները ի հարգէ վուր, կօջորից էլ զէն պիտի գնան:

«Մշակումը» էղ պրօֆեսուրը դոխտուր բաղիլը գրել է, թէ՝ «մենք պտինք գիւղնայ թէ կաթղկոս ովկ կանայ ըլի, կօսէ. կանայ ամեն մարթ կաթղկոս դառնայ:

Վէ. էստի մտիկ, էտ էլ չի իմացի լոթին է:

«Թուրբը ան հային վուր հայութին ընթրունին, կանայ կաթղկոս ջոգւին, կօսէ: Ֆիէ:

Իմ խիղճը կուլի:

Միր սուփ գրիքոր լուսաւորիչը հայ:

խօ հայ չէր. հասա լաւ կաթղկոս էր:
Զէր Մակար լուսահոքի կաթղկոսի
համա էլ ասում էին, թէ նա էլ կօսէ,
քրթի սեռունդ է, կօսէ, միթու թէ
մամապապան քուրթ թէ եղդի է էլի. ու
տեհանք, վունց խիթով աբուռով կա-
թղկոս էր. բայ չէ ու... մեղայ Աստծու,
ըերնիս ինչեր է գալիս:

Իս էն իմ ասում, վուր կարելի է
ըի, ինչի չպիտի ըլի:

Հիմի Բազիլը, վուր թրքանայ, մօ-
լութին չի կանայ անի:

Մարթը պրօֆեսուրութին անում է
դոփտուրութինն էլ հիդը, «Մշակին»
էլ խաղնում է, յիմար բանիր է տպել
տալի—ու էտղամ չի կանայ ըլի՝ վուր
մօլա էլա դառնայ:

«20 տարեկանէմէն (ջնել) մինչ-
կի 120 տարեկան (պառաւ) կանանք
ընդունի, կօսէ»:

Այ վուր ասի աֆրակ—մեղայ Աս-
տծու, կօջոր:

Զէր հեստի շուքիր չին նընգի, վունց
վուր զագրանիցումը ու Պիտրեբուխումը
նընգի է, չէր բանը էսթաւուր է, վուր
խանդիսան հովեր էլ է անում ու
պրօֆեսուրը, հեղն էլ «Մշակի» խմբա-
գիրները 20 տարեկան մինչկի 120
տարեկանի վրէն ին խօսում—վուր
շուքիրը գան, խօմ, վայն է էկի ու
տարի:

Ով գիդա իրիք տարեկանի վրէն էլ
խօսք գցին:

Շուքիր է:

Ամեն բան ըլում է:

Շուքիմէն՝ իս, իփ վուր նեղւում իմ
սարդափն, իմ մտնում—նամի ճիէք
(խոնաւաճիճու) իմ բռնում:

Շուքի ժուգ Քալանթարը սարիրն է
փախչում, Օխանիզ թումանովը կոսի
ճիով թուչկուում է, շուքի զօրութի-
նիցը Աստրաբար քաղքում է մնում,
Մահմէդ Ալին Օդեսիցը թեհրան է
փախչում. բայ շուքի զօրութինը Բա-
զիին էտղամ չէր կանայ խօսցնի:

«Համա, թուրքը ան պարսիկը վուր
հայանան կանան կաթղկոս ըլի, կօսէ»:

Կօջորը պտէր Տէր Մեսրովը Մելի-
եանցին հարցնէր, ու իմ ազրը կի էն է,
—վուր կանան:

Մինք էկ բանիրը կանանք:

Հիմի ով գիդա, ով է փոնչի թրքե-
րէմէն ան ձմեռուկ ծախող պարսիկնե-
րկմէն հայացի—ու լոթին գուզի, վուր
կաթղկոսական թեկնածու անի:

Իս վուր տեհնում իմ, միր կաթղկոսա-
կան նընդրութինները ու շուքիրը, վունց
վուր վերեն էլ ասի, մի տեսակ զօրու-
թին ունին մարդկերանց վրէն—ու աս-
կի գուրձիչներու վրէն ուփրօ.

Կօջոր էն. է կօջոր...

Խամարակա ամենայն հառց
Գատապար աղա Կալատուզով

Եջի «Նէթնիմ»-Ներիծ

Ես պոկեցի քիւր դիմակներ
Ցուղաների դէմքերից,—
Եւ լարեցին որոգայթներ
Իմ դէմ ամեն կողմերից:

Ինձ թունաւոր օծի լեզով
Բամբասեցին չար մարդիկ,—
Եւ ելայ ես արդար խըղճով...
Նոցա ջանքեր դարձան չիք....

Ծըշմարտութեան յաղթանակին
Ոչինչ եղաւ խոչընդուր,—
Նենգ թըշնամեաց ողջ բանակին
Բաժին մընաց սեւ ամօթ...

Ու վաստակած եկայ ամրոց,
Ապառաժին կառուցած,
Ուր մեր ձեռքով նդէմ-ծաղկոց
Քեզ հետ էինք մենք տընկած....

Յած զլրի իմ զէնք ու զըրան,
Իջայ ծաղկոց՝ քեզ պըրկել...
Ուրքան ուրախ, որքան վստահ...
Բայց... դու չեկար հանդիպել....

Սեան-Եախօի

ՀՐԱՒԵՔ ԳԵՐՆԵՆ

Եկ, ո՞վ գարուն—

Սիրագորով,

Եկ գարդարուն

Սար ու ծորով.

Լրցի՛ր երկիր

Հատիկներով,

Կանաշ-կարմիր

Ժակիկներով.

Դաշտունիտուն—

Դեփիոներով,

Ականակիտուն

Աղքիւրներով,

Նորաբողբոջ

Ժաղիկներով.

Քաղցրիսխոց

Վրտակներով,

Մանկանըման

Դառնուկներով

Եւ ծըլպան

Ծընճղուկներով:

Քաղցրիկ զարուն,
Եկ հաւէրով,

Նախշուն, սիրուն

Կաքաներով:

Գեղածիծաց արհանդարուն

Եւ կենաշաշաղ

Անձրեներով

Ծով ու ցամաք

Լրցի՛ր կեաներով,

Դիւղ ու քաղաք

Աշխատանքով,

Նոդ-անդաստան-

Առատ ցանքով,

Եէն ու աւան—

Արդար ջանքով:

Եկ լուսամիտ
Խորհուրդներով,
Ազատամիտ
Նոր մըտքերով.
Բարձը ու վրսեմ
Գաղափարով
Եւ աննըսմ
Վառ դամբարով.

Եկ, ո՞վ գարուն,
Նորոգ կազմով,—

Առանց արին

Պատերազմով,

Դատաստանի

Մեղմ ծեւերով.

Խաղաղութեան

Լայն թեւերով.

Անքիծ, արդար,

Սուրբ օրէնքով

Եւ հաւասար

Իրաւունքով.

Բե՛ր վիճակի

Թեթևութիւն,

Խօսքի, խըղճի—

Ազատութիւն,

Ժամ ու վանքի—

Պահպանութիւն,

Ծընչւած կեանքի—

Լուրջ դիւրութիւն,

Ողջ աշխարհին—

Սէր, միութիւն,

Թուրք ու հային—

Եղբայրութիւն:

Եկ անուշիկ,
Պերճ մալխսով,

Կարմրամշշիկ

Մանէ ու կուտով.

Նորանց պահի՛ր

Ամուր յուսով,

Լուսարի՛ր

Ուաման լուսով.

Լիլիպուտի



Քաղցրիկ զարուն,

Եկ հաւէրով,

ՊՈԿԱԾ ՏԵՐԵՒՆԵՐ

1. ԽԱՌԵՎԵՐԴ.

ՆԱ. — Ասուած իմ, որքան քաղցր է... համբոյր քաղելը:

ՆՀ. — Ասուած իմ, որքան դառն է... դակարող է էժան չնստել:

ՆԱ. — Յարգելի օրիորդ, դառն ու քաղցրը — խիստ դուրեկան խառնուրդ է:

2. ՆԱԽԱՋԳԱՉԵԱԳՈՒՄ.

ԽՈԳԵԼԻՆ. — Խնդրեմ չփշացնէք իմ նոր ծառայողունուն: Նախինը — ամբողջ կէս սարի գրասենեակիս մատեանն էր պահում, իսկ այժմ իմ ծանօթ գործարանատիրովը քթից բռնած ման է ածում...

Քարտուղարը. — Մի անհանգստացէք... ես շատ կարճ քիթ ունեմ:

3. ՀԵԱՎԱՆԴ ԱՊՁԻԿՐ

ՄԱՅՐԸ. — Աստղիկ, սրանից երկու թէ երեք օր պաջ, քեզ տեսել են մի ինչոր պարոնի հետ փողոցով գնալիս:

ԱՂՋԻԼ. — Այս մայրիկ, ճիշտ է: Դու ինձ շարտունակ պառակ էիր, որ ջանիւ աղջկայ համար ամօթէ է գիշեր ժամանակ փողոցում մենակ մանդալը:

4. ՀԵՎԵՆԻԾ.

— Դու ինչ ես կարծում, ես նրան դժուք կը գամ:

— Ի հարկէ, Զէ որ սէրը կայը է:

5. ՀԵՐԵՍՈՎԵՐԻՄ.

Նէ. — Մեր այս պլուզայիկ դարում տղամարդիկ, առաջւան պէս, դէպի կանայք տածած սիրոյ համար այլևս հերոսութիւններ չեն անում:

ՆԱ. — Հապա տղամարդը որ ամուսնում է, դա ինչ պակաս հերոսութիւն է:

6. ՍԻՐԵՎ ՄԱՍԻՑ.

❖ Սիրել հարկաւոր է այնքան անգամ, որքան սիրան է թելադրում:

❖ Սէրը՝ որպէս երջանկութիւն — ջատթանկ է ձեռք բերում:

❖ Սիրոյ գործերում ամենայն մի պայմանագիր՝ նրա քանդելու միտքն է ճնեցնում:

❖ Բոլոր նըանք, ովքեր շատ են, խօսում սիրոյ մասին, սէրը միայն լեզի վրայ ունեն:

❖ Սէրը, ասում են, հրաշներ է գործում. այն, բայց շատ յաճախ էլ յիմարութիւններ:

❖ Սրտի մէջ սէրը՝ սովորականապէս՝ երևան է գալիս ուղեղին ամպեր պատելուց յետոյ միայն:

Համայնացրեց:

Եզրակ ծայրայեղ վարդապետ

ՊԱՏՃԵՆ ՄԻ ՆԵՄԱԿԻ

ՅԱՐԳԵԼԻ ԵՂԲԱՑՐ!

Ստանալով ձեր ուղարկած նամակը, պարտք եմ համարում շուտ պատասխանելու, նախ՝ փողի մասին ոչ մի խօսք մի անիւ քանի որ այժմ փողը Բալախանում ու աղէսէ է դառել. երկրորդ՝ ստացածներս հազիւ մեզ է բաւականանում, երրորդ գուցէ կասէք — «բա նազրադը, միթէ չի կարելի գոնէ նազրադից մի մաս հասցնել մեզ».

Հաւատա նազրադն այնքան ստացանք, որք ածիս ծախսով պարագի յոյսով «մապարիչ»-ի: Շատերը ի հաշիւ նազրադի պարտք են արել և կնանոց «գաչա» զրկել, այժմ ստացածները հազիւ պարտքի տոկումին կը բաւականանայ. թւում է ինձ, որ դաշայում եղողները կը մնան սինչի միւս տարրայ նազրադը: Ինչպէս ձեզ յայտնի է, մենք մի տարրօրինակ «իսապիք» ունենք, երբ որ իրանց ցանկութեամբ նազրադ էին տալիս մենք չեմ-չեմ էինք անում և սկզբունքով հակառակ կանգնում, այժմ երբ որ իրանց ցանկութեամբ նազրադ էին տալիս մենք չեմ-չեմ չեմք անում և սկզբունքով հակառակ կանգնում, այլ և ինչպէս անհետանք կը մնայ. Ճիպ պայմանակի մաս մաս իսուքը իսպառ մտքից հանում և եթէ հնար ունենանք պահանջ կը դնենք, բայց բարերախտաբար թէ բժբախտաբար պահանջ խօսքը վերացել է Բալախանուց, ինչպէս միութիւնը մեր մէջ, առանց որի ոչ թէ պահանջը, այլ և ինչպէս անհետանք կը մնայ. Ճիպ կապելու համար անցնում եմ նամակիդ երկրորդ կէտին. գրում ես. — «Մենք յոյս ունէինք, որ այս ամսին կը պատ. նշանածդ մեղք է, խեղճի աչքերը ճամբիդ մաշւեցին. եթէ չես գալու գրիր նալուով դրկեմ և այլն»: Յարգելի եղբայր. եթէ այս տողերը մի այլ կողմնակի մարդ գրել, ես անշուշտ կասէի, որ գրանով ուղեցել է ինձ և իմ աննմանին ծաղրած լինի, բայց որովհետեւ գրողը դուք էք, այդպիսի ենթադրութիւն. ոչ մի իրաւունք չունեմ անելու, ուստի զնում եմ իմ համաձայնութիւնը. ներողութիւն անհամաձայնութիւնը. հետեւալ յարգելի պատճառներով:

1. Այս փոստին, որով դուք անուշիս նաւլու էք արել, աւազակները կարծելով որ մի մեծ զանձ ես փոխադրում, յարձակում գործեցին, և ինչ, մեր անհամբերութեան պատճառով զոհ պիտի զնայ իմ կեանքի նեցուկը, յետոյ. եթէ ես ձիւնը տամ գըլիխի, կը հաւատամն որ ես այդ գարդից եմ անմեւմ և ոչ թէ հովանալու համար:


2. Վերցնենք թէ անվտանգ հասաւ մինչի առաջին կայարանը. գիտէք ինչքան վըտանզների պիտի ենթարկւի իմ եարս մինչի վագոն մանելը: Զնայած որ դուք գրել էք «օշորօջիօ», գիտած եղէք, որ գրանով աւելի վասած էք ապահովութեան, քանի որ գրանով ծառայողների ինքնասիրութեանը կպել ես, իրանց պարտականու-

թիւնը յիշեցնելով. մէկ էլ յիշութիւն պահպահի ճան սանդուղներից ցածր ուղարկութիւն քեզ «օշորօջիօ» ասելով, յետոյ, ով կերպաշխաւորի, որ իմ սիրունիկ պահպահիկ տեղ չեմ ստանայ մի չալ ու կաղլիկ ագուալիկ:

3. Ենթադրենք մի ըռպէ, թէ անվտանգ տեղ հասաւ մինչի մեր փոստատունը, կործում ես թէ գրանով բանը վերջացաւ: Զէ եղբայր միամիտ մի լինիլ այդպէս կարծելու. լսիր ասեմ. գեռ փոստալիոնը երեք օր ման պիտի գայ, մինչև որ ինձ գտնի, քանի որ փոստի մօտն եմ ապլում, նրանք մօտը թողած, հեռուն են մտն գալիս: Վերջապէս ինչ գլուխդ ցաւացնեմ, ստացայ պաւեստկան, նեինեւ վազ եմ տալիս փոստը այն յոյսով, թէ մի ըռպէ ից յետոյ սիրունիս մօտ կը լինի, բայց արի տես, որ այստեղ ևս ահազին ջանջալներ կան, քանի որ դու գրել ես ... եանց, իսկ պատպրտիս մէջ գրագիրը վերջացը է իր սիրած ոճով այսինքն օբով, դէն արի էշը ցեխից հանի, ոհ, ինչ եմ ասում նշանածն նալութից հանի: Ինչքան ասում եմ — նա իմն է ես, չեմ խարում, կամենաք իրանից հարցը էք՝ նա ինձ է պատկանում, — իս խօսքին չեն հաւատում, գեռ ևս ասում եմ՝ հարբած է ինչ է սարդը. եազիկի լինչին հարցնէք. ուրեմն նալուդդ կը մնայ այստեղ ամիսներով, մինչև որ յետ ստանաս. իսկ երբ ստանաս, արդէն իմ կեանքիս կէսը սովամահ եղած կը լինի. յետոյ, ես ինչ անեմ, կարծում ես թէ այստեղ Արասթումանի նման սառ ջրէ՞ր կան, որ ընկնեմ մէջը եթէ ոչ խեղդւեմ, գոնէ հովանմամ: Զէ եղբայր չինի թէ այդպիսի սիալ քայլ անես, թուղ մինչե որ ես կը գամ. և եթէ չի համբերում, ինչպէս զրել ես, թող գնայ ուրիշին, ես ոչինչ չունեմ քանի, որ ես նրան այնքան եմ սիրում, որ եթէ մի այլի մօտ աւելի բախտաւոր կը պայի իրան, ասում եմ, ես ոչինչ չունեմ զրա դէմ. իմ նպատակս է նրան բախտաւորացներ, իսկ եթէ այդ բախտը նա կը պատճառ ինչ էլ չունեմ:

Առաջմ այսքանը. ցգրութիւն:

Մնամ քո փոքր եղբայր՝ Մոն-սի



ՄԱՐԴԻԿ ԵՆ...

Մարդիկ են ողջ՝
Հիւանդ, առողջ,
Շորջա, այստեղ,
Ամեն տեղ,
Մարդիկ անխոնջ,
Մարդիկ անկոչ,
Մարդիկ ցատրող
Եւ անշեղ:

Եւ մարդիկ են...
Ողջ ուսում են
Եւ շրջում են,
Եւ ապրու,
Օ՛ մարդիկ են,
Որ կուռմ են...
Եւ միմեանց
Խանգարում:

Եւ դիտում եմ...
Ես տեսնում եմ,
Եւ ճանաչում
Այդ մարդկանց,
Ես հրճում եմ,
Եւ զղջում եմ
Եւ անիծում
Միշտ նրանց:

Է՞, մարդիկ են...
Ես ասում եմ,

Եւ մերթ անցնում
Անտարքեր,
Բայց մարդիկ են...
Միշտ խղճում եմ
Եւ բարկանում
Անհամքեր.

Խենք



Հասցէ բարեւազիրս ի քաղաքն Օրդուքաթ
իմ քօփկան յաշկերտիս աղայ Ծլթեանին.

Փիսօ ջան.

«Խաթաբալայի» 29 նօմերին մէջ գանգատ կէնիս, թէ դուն քովս յաշկերտ իս էզդիր, ևս ալ քեզի շատ գէշ թիմարիր իմ: Շատ լաւ իմ էրիր, յաշքդ իմ հանիր, թիմարելով քեզի մարդ իմ շնչիր, մարդու սրայ իմ խառնիր, կտորմ հացի տէր իմ էրիր, տէյմօր Օրդուքադ իմ հասցըր, ջրի բոլ տեղն իմ զրկիր, հիմի ալ չիս ամշնայ. յիրես ծեծանք կինիս, թէ ևս քեզի ծեծիր իմ երոր քովս յաշկերտ էրիր: Հիմի Օրդուքադու շրով վլաւը կուտիս ու իմ ամակս շուրը լցնիս կը. հա:

Ա՛խ Փիսօ ջան. բայազեթցոց շկօլի վէր մէկ խայտառակութենը հէքաթ էնիմ: Աս ըսածդ հոգեքարձները հնալօժով Ղարաբաղից բերել էին մէ ուստարաշիմ վարժապետների հմար: Անունն էլ Փեփի, էլ ինչ Փեփի բարելական կրակ, շկօլի գլխուն պատիժ:

Համարեա ամդողջ գեղեցկութիւնը, ևս այժմ գատապարտւած եմ չդիտեմ որ չարխնդաց զօրութեան վճռով վերահասքացին ու անարգանքին:

Շատ յիմարներ աղաղակում են թէ— «...քրանելով կարելի է վերածնել...»

Բայց միթէ ևս կարող եմ քրտնել...

Տարօրինակ է ճշմարիտ. վաշխառու հօրս գործարաններում տառապող հազարաւոր բանւորների արիւն-քրտինքի զինը, որպէս արդար ժառանգութիւն ի պառ կլանելով, ևս նորից վտիտ եմ, որպէս կմախք և նորից իմ մէջ արիւն կամ քրտինքի մի հիւլէ չըկայ...

Ինչելից. ևս մեռնում եմ կատաղի նզովքը շուրթերիս, նզովք դէպի... դէպի մում... չգիտեմ:

Մի ներքին ձայն ինձ պատւիրում է կարծես աղօթել... բայց ինչ աղօթել, ում աղօթել... և ինչպէս աղօթել... կամ երբ եմ ևս աղօթել... և վերջապէս ինչ է աղօթքը...

Է՞ն, սակայն, Սուլէմա, Սուլէմա գու կարող ես ինձ փրկել...

Փառք մահին:

II

Միրելի Միշտ.

Միրելի աղօթելով իմ հայրական հարիւր հազարների ամբողջ կայքն ու կարողութիւնը— ապրելով իտալիայի հրաշալի գրկում, Շվեյցարիայի ջինջ երկնքի տակ, Փարիզիան կախարդ սալօններում, չքնաղ Ֆրինաների ծոցում... որպէս անկուշտ մի մաշող ցեց, մի արիւնաբրու տիզ, աւելելով կեանքի

Յամեն օր կուի շորերը հարած, շառած թուղթը ծոցը, գագինակը ձեռքը, որուագ մողացը արաղով, սպիրտով, գինով կտուշած նորով կըմտնէր շկօլ ու մահանայ բանմ գտնէր կը. ու կուրը սարգէր կը: Ատոր կնիկն էլ վարժուհի էր, հաւկիթ չէր ածէ. հմը տէյմօր յիրիկուն ղըսը հաւի զայդի կըշչար կը: Ատոնց սիրով սավառով օրթադ էր գառիր մէ յուրիշ վարժապետ: Խալիս օլանը աս վարժապետին, չիմ գիտեր ինչի, կէկէ կանչէն կը:

Մէ թոփալ սատանամ ալ կար ասոնց մէջը: Կէկէլը, յերկան յանկանջ Փեփին. կչչան հաւը, թոփալ սատանէն խօսք մէկ էրին—շկօլը խանեցին, թան ու փոխինդ շինին, էլ քննիչ, էլ թեմական տեսուչ, էլ էրևանի յառաջնորդ, էլ հոգեքարձու, էլ պլիստան, էլ գործակալ, էլ ժողովակար, էլ քենթակ, էլ քիւֆուր, էլ յառութանել, էլ... էլ, էլ, ևս ինչ գիտեմ, հազար չեշիտ խայտառակութեն թափաւ շկօլի զլսուն: Արթը հոգեքարձները սրով շկօլի դուռը նստէին կը, զարառու քաշէին կը, օր վարժապետները յիր թիմարեն: Եկզամինի օրերը մօտեցաւ թէ չէ, Կէկէլը, Փեփին, կչչան հաւը կիսատ թողին փախան: Կիւրեղ որբազանը էկաւ եկզամին էրից. վայսաչարի վերջացրեց, շկօլը փակեց ու գնաց: Աս պատմութենը Շար-իսմայլի էքֆիաթից ալ յերկան է. լաւ է, ըսինք. «ՁԵնը տակը, քարը վլրան, քանի խառնինք, զէշ հոտ գելնիս: Անտեղի աշղները շկօլի վրան խաղ էին

ևմ հիասթափութեան տիսուր ողբերգը շուրթերիս...

Ա՛խ, դու այսնպէս սառն ես ու սիրելի... թուում է թէ ցուրտ ու սառնամանիք է իմ շուրթը, թէ լալիս է իմ ըմբոստ հոգին, թէ իմ գոյութիւնը զեռ վաղ է աշխարհի համար այս հացկատակ օրսկուրանտների մէջ...

Լաց կամ ժապուա... այդ միհնոյն է. վաղուց է որ ես հեգնում եմ կանանց լացին էլ... ծիծաղին էլ... աղօթք ու արցունքին էլ...

Ախ բաւական է. արդեն այլիս անկարող եմ ապրել այս հոգեխոչշ պայմանների մէջ.

Այս բողելիս անուշ՝ ոգելից թերմօնները առաջիս, որոնք կոնծում եմ քո աջ ոտքի մազիկով, վերջին հրաժեշտու եմ տալիս աշխարհին...

Դէ բարի մնաս, սրտիս իշխանուհի. այսուհետեւ մենք բաժանաւած ենք գերեզմանով:

Խնդրում եմ ոչ ոքի չմեղազրի իմ մահան համար:

III

Եմ ուկեայ փիսէկս:

Եթէ միայն ճիշտ է բիբլիական շաղակատանքը, եթէ միայն կայ մի այլ աշխարհ—ուր մարդկային հոգիները երանական հեշտութեան մէջ, ծաղրում են երկրային հիւանդու սէրն ու նանիր տառապանքը, եթէ միայն այդ սիօլիստիկ դօգմաների մէջ կայ մի հիւլէ ճշմարտութիւն... ես գնում եմ այնտեղ.

կապեր ու յամեն տեղ կանչէին կը Ահան
ատ խաղը գրիմ, դրկիմ կը քեզի, օր գուն
ալ Օրդուրադու չիրը ուստիս ու ատ խաղը
կանչիս՝

ՄՈՒԽԱՆԲԱՋ

Կէկէն ու Հոռողը դարերի ծէրին
Մենակ փսփսում են սարերի ծէրին.
Հողը մեր շկոլի խեղճ գլխուն բերին,
Սաղ աշխարհի մէջ խայտառակեցին:

Լաւ ծեծեցին յիրար վարժապետները,
Շկոլից փախցրին աշակերտները,
Քնութիւն սարքեցին, դատաստան նստան,
Ղալմաղալը հասաւ մինչև Հնդստան:

Խայտառակ գործեր սրանք արեցին.
Սըգելած պտուղը սրանք կուլ տուխն.
Աղմուկ ու կուրը սրանք սարքեցին
Կարգ ու կանոն, օրէնք սրանք ջնջեցին:

Թող կորչին-կորին անզգամները,
Այդպիսի անպէտք ուսուցիչները,
Թող գնան, ջնջին անամօթները,
Մեր շկոլի միջի խայտառակները:

Անամօթ կէկէլ, կչկչան Հոռող,
Մինչ ճըր լիգէք դուք յիրար մոռութ,
Չեր պիղծ երեսին թուք ու նախատինք,
Չեր գլխին փլչի երկինք ու գետինք:
Գրեց Աշըր Յովէս
Ապայշի Մարգար

Ազ և չեմ կարող տանել կեանքը, քանի
որ ես մի աւելորդ մարդ եմ համարում
ինձ:

Այժմ չի հոգեմաշ գիշեր է, շուրջս համը
ամայութեան մէջ շողում են դանդաղ գի-
շերային, տպուշ ստերները, վառարանից
իր միօրինակ ճիշերն է արձակում ծղրիդը
ու ես գլխչը ձեռքիս, պաղ ու պուշ հա-
յեացքս և մեռած քո յուզող լուսանկարին,
չգիտեմ ու յըլմս ինչ գրել... Ինձ թւում է թէ
քեզ մօտ եմ հիմա և ըստ ամենօրեայ սո-
վորութեան, ձեր գահլիճի գիգանտ ֆիկուսի
տակ ոտքել տիգ մօտ նստած, ականջ եմ
դնում քո մելանոյշ երգին մանոլինայի
ներդաշնակութեամբ—

Մենք կը զենանք անուրջների
Հայրենիքը լոյս, աղատ...

Աղօթելով կը մոռանանք—
Մովթ անցենալի անսրգանք...

և արտասուծ եմ, երկար արտասում...

Ուզում եմ ամբողջ կարօտ ու սէրս
թափել այս թշթիք վրայ ու քեզ ուղարկել,
բայց վախենում եմ որ հատնէ ու սիրտս
դատարկւի իր քաղցր տանջանքից...

Զէ որ ես ուզում եմ ինձ հետ անտի աշ-
խարհ տանել այդ քաղցր տանջանքից գէթ
մի մասնիկ—այդ մեռնող մարդու ամենա-
փերջին քմահաճոյքն է:

Բայց ինչու եմ ես մեռնում. չգիտեմ,
ինչպէս ե չգիտեմ, թէ ինչու եմ քեզ սի-

ՕՐ. ԸՐԵԳԻՑՑԵՆԻՆԻՆ

Մայրու նրման—համաշափ,
Ճապկու նրման ճըկուն ես.
Հայի նրման—թուլասիրտ,
Զեչէնի պէս—աննկուն ես:

Եղնիկի պէս—թեթեւերթ,
Փրղի նրման—դանդաղ ես.
Գեհնենի պէս—կըրակոտ,
Սաոցի նրման—խիստ պաղ ես:

Արեւի պէս—ծիծսողկոտ,
Ամպի նրման—լացող ես.
Տատրակի պէս—մըտերիմ,
Հափի նրման—փոխող ես:

Օձի նրման—լորամանկ,
Աղանու պէս—անմեղ ես.
Քինայի պէս—դատնահամ,
Մեղրի նրման—համեղ ես:

Լուսի նոման—լրուկեաց,
Ամպի նրման—գրող ես.
Սընդկի նման—լիւրալոյժ,
Մազնիտի պէս—կըպչող ես:

Գալլունու պէս—լիւրազայթ,
Շեմիունու պէս—ժուժկալ ես.
Վրացու նրման—վլրիպոյդ,
Պապի նրման—անպիսալ ես:

Դալլունու պէս—դուժկալ ես.
Վրացու նրման—վլրիպոյդ,
Պապի նրման—անպիսալ ես:

Յունակ այսպան յամառ ու այսպէս յուսա-
հատ...

Ես թունաւորւում եմ մկնդեղով (յիշում
ես, շատ անգամ դու ինձ կոչում էիր «սի-
րելի մկնիկ») և այդպէս ես զոհում եմ քեզ
իմ կեանքի այգն ու առաւօտը, որպէս զի
լաւ անցնի քո կեանքի երեկոն:

Գրպանում գանսող ամենավերջին 38
կոպէկը բաժանիր հաշմանդամ մուրացիկ-
ներին և ազօթիր իմ հոգու խաղաղութեան
համար...

Յաւիտեան բարե մնաս...

IV

«Տալիս, տուզ, կարօլ...» ահա իմ ամեն-
որեայ ծամծած «Հայր մեր»-ը: «Վիստ,
բակարա, ուամս...» ահա իմ հաւատամքն
ու դաւանանքը:

Այդ չարագուշակ անունները որոնք մի
օր իմ սրբութիւնն ու հապարտութիւնն էին
կազմում, հիմա արդէն անխօս անկումս են
յուշում:

Կորաւ ամեն ինչ. քսակս լալիս է երեսիս
իր կլորիկ ու զնգուն ոսկիներից որբա-
ցած... Ա՞խ, ես այլևս երբէք տեղ չեմ բըռ-
նելու կապոյտ սեղանի շուրջը ոչ իբրև ոս-
կիայ էլ և ոչ էլ իբրև շուլլեր: Կորաւ ամեն
ինչ... խաղի աղարտի փոխարէն հիմա ինձ
քաշում է մի նոր, բայց անյայտ, մութ ու
մշուշապատ հանգստավայրի մի խուլ աղա-
ղակ:

Հերան նըման—հաստամու, 16. ԳՅԵՇԱՌՈ
Աւազի պէս—ամինչեւեմութիւնութիւն
Աի, երնէկ թէ իմննամ,
Աղջիկ, վերջը դու ո՞ւմն ես:
Լիլիպուտի

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

—Աանդեսակս, արդէն զարթեցիր...
Թոշնակս այսօր չգիտեմ ինչու շատ վաղ է
վեր կացել... Ե՞կ, վասիկս, քեզ համբու-
րեմ...

—Համբուրիիր, կատոիկս, համբուրիիր: Իսկ
քո կինդ այսօր երազում գիտեմ ումը տե-
սաւ... իր մոպսիկ-շնիկին: Ի՞նչ կուզես՝
թէ թէ կոփէ:

—Մկնիկս, ես աւելի լաւ է մի ըմպա-
նակ օդի խմեմ և վրան էլ մի որևէ աղի
բան ուտեմ:

—Այ թէ ինչ սագն ես եղել: Լաւ աղմէս
էիր ձևացնում քեզ: Դրա համար գիշերս
ննջարանը ներս պրծար թամամ զայլի
պէս: Ասել է թէ քէֆ անելու էիր: Իսկ
դու, քամելէնոնդ, կոկորդիլոսի արցունքներ
էիր թափում, թէ հայ աշխատեցի ու վայ
դարբացի:

—Հապս էլ ինչու ես վրդովւում, հնդու-
հափիկս:

—Որովհետեւ դու օձ ես եղել: Դու գի-
տես որ մենակ տիրում եմ, զնալու տեղ
չունեմ, որ ես վանդակակալած մի թոշնակ

Սակայն չէ որ ես ունիմ իմ մէջ գեռ և
լաւ մարդ լինելու շատ ու շատ ազնիւ հա-
կումներ, ինչ պատահեց ուրեմն. Երբ բըռ-
նեցի ես թղթացաւով և վերջապէս միթէ
ես արդէն անզօր եմ լուժել իմ այդ կո-
րսատարեր հիւանդութիւնը... միթէ ես
այնչափ ողորմելի ու թուլացկու դաստիա-
րակութիւն եմ ստացել, որ...

Այն, աղն:

Զէ որ երեկ էլ նոյն կերպ էի մտորում,
բայց այսուամենայնի գիշերը վաճառեցի
շորերս ու անկողինս՝ խաղալու զնացի և...
ի հարկէ տարեցի...

Այսօր ամբողջ օրը քաղցած եմ, կոպէկ
չունիմ, շոր չունեմ որպէսզի դուրս գնամ
տանից, սիրտ չունիմ... ոչինչ, ոչինչ չու-
նիմ, բացի մի բրաունինգի...

Ուրեմն ինչ ելք է մնում ինձ այժմ.
Թերիկա.

Ահա քաշում եմ բոառնինգի շնիկը, մի
որոտ—և ես աղատութիւն ստանալով այս
սիրտ— և ես աղատութիւն ստանալով այս
սիրտից, կերթամ ապրելու խաղա-
ղակութեան մէջ—այնտեղ, ուր չկայ ոչ թղթա-
խաղի աղարտ, ոչ մոլութիւն, ոչ կարմիր
սեննակներ, ոչ անհամբոյր կանայք, ոչ
նեխւած շանսօննետկաներ, ոչ ինեղ սրտի
տարակուսանք...

— Է՞ն, բարե մնաք, իմ յոյսեր...
(Կըշարունակւի)

Մարիկ

եմ: Ամբողջ օրն ես տանն աշխատում եմ մեղմի պէս...

—Ես էւ ով իմ կըկու, աշխատում եմ եզան պէս:

—Լաւ այն է, լուկ: Քեզ ուզելով ես այնպէս էի կարծում, թէ երկուսս էլ կըլինենք անրաժան—Ծովակների պէս, այն ինչ ինքդ անմեղ գառը ձեանալով՝ իսկապէս չաղկալ ես եղել:

—Իէ, բանը որ այդտեղ հասաւ, կասեմ, որ դու ինձ համար ոչ թէ սովակ ես, այլ կատարեալ ազաւ:

—Հիպարպատասմ, այդ բանը ով ասէր չասէր, դու գոնէ չպիտի ասէիր: Սակատակ արջ, օրանգուտանգ: Ո՞ւր էին իմ աշքերը, որ քեզ պէս կապիկն յանձնեցի իմ կեանքը: Բորենի, հոտած ըորենի: Իսկ ամունացու կցած ժամանակ քեզ առիւծ էիր ձեւացնում: Ո՞ւմ մարով կանցնէր, որ դա մի սովորական թրջւած հաւ է:

—Խո՞գ:

—Է՞շ:

Թարգմ. Գ. Յ.

Տիկինը.—Ես, օիկորդ, ձեզ ընդունում եմ, որ մանկապահ, մեր տան մէջ, ուստի աւելորդ չեմ համարում նախազգուցեացնել: Որ ձեր կողմից մի որ և գաղտնի առաջարկութիւն ամունուս՝ կարող է թիւրմացութիւնների պատճառ դառնալ...

Օրիորդը.—Ողորմած եղէր, տիկին, ինչե՞ր էք խօսում... ես մեծայրու եմ, որ ձեր ամուսինը այնքան բարի կըլինի, որ թոյլ չի պատ ինձ իրանից առաջ:

Տիկինը (խորաքարունուն).—Մարիամ, պատացիր հաշեւը ի հեռացիք, —դու ամուսնու հաճելի չես: Խոհ:—Տիրունի, ես պատրաստ եմ ձեր ամուսնուն հաճոյանալու: միայն երկիւզ ունեմ, որ այն ժամանակ հաշիւ ստանալու հերթը ձեզ կըհանի:

—Ա, ինչ հոգը տամ գլուխս, սիրելիքը ըստ գիշեր երազում հանգուցեալ ամուսնուս ասելի երեսն եմ տեսնում...

—Հա, երկի, ինքը քեզ չի տեսնում, թէ չէ ամենակն չեր երկիւ:

Լիլիպուտի

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

(Արդիից)

Ժամանակով երկու եղբայրներ են եղել: մէկը թագաւորի մօտ էր ծառայում, իսկ միւսը իր ձեռքերի վաստակովն էր ապրում:

Մի անգամ՝ հարուստ եղբայրն ասաց խեղճին:

—Ի՞նչու դու էլ թագաւորի մօտ ծառայութեան չես մտնում: դրանով կազատէիր աշխատելու պատուհասից:

Այս բանին եղբայրը պատասխանից:

—Հապա զո՞ւ ի՞նչ չեսու աշխատում ճորտական ստորացումից ազատելու համար: Իմաստուններն ասել են, որ աւելի լաւ է մարդու իր աշխատանքով հանգիստ հաց ուտի, քան թէ ոսկէ գոտիկ կապի և ուրիշ ժառան դառնայ: Աւելի լաւ է ձեռքերով

կիր շաղախել, քան թէ ի նշան ստրկութեան՝ այնք կրծքի վրայ դարսել: Աւելի լաւ է մի կտոր հացով բաւականանալ, քան թէ ստրկաբար մէջքը կրացնել:

Գ. Թարուրիանց



ԽԾԲԻՆ ՈՒ ՎԸԾԽԸԾՈՒՆ

Վաշխառովի տան անկինում,
Սարդը ոստայն էր լարել.
Վաղո՞ւց էր նա այդտեղ պարում,
Եւ ոչ որ չէր նրկատել:

Ի՞նչպէս եղաւ, մի օր յանկարծ,
Վաշխառովն այդ նրկատեց.
ծառայի վրայ խիստ քարկացած՝
իմոյն քանդել հրամայեց:

Ո՞ւ՞զ զգելի դու արարած,
Ասաց սարդին վաշխառովն,
Զրիակեր ու անգործ ընկած,
Ծըսում ես այլոց արին:

Նվաններիս, ապաց սարդը,
Չեմ հասցրել երբէք վնաս.
Հաւկացել եմ նրանց գարդը
Ու չեմ եղել մէկին ասաւ:

Զախօս

ՑԱՑԿԱՊԻՍ ՑԱԶԱԽԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ես տարին որ մեր Ղզախու մհալումը մուրեխը, էղ հացի քաղին ցորեն չիմ կերել էր, Շուլաւերցոնց կինի արադը բոլ էր, էղ տարին, քորաղագա, զորմած ֆոքի Մատոնց Սարիբէկը, Շարուկշարուկինց Սարքիսը մշա խմում են որ տառնում են ջառնացեացի փոշտալիօն, հէս էղ տարին տեսայ, ու ասու կա ծին կա ծի: Վայ Ալէքսան, ասի, ըմբակիտուկ ըլիս գու, բա էս ոնց աըլեր որ ծին տարել են, տարմանը թողել: Վայ է, աղբաթը լիեր ըլի որ դու ես, գէ էս ա ծին տանողը տարմանն էլ հըլբաթ մի օր կտանի էլի:

Դէ որ ըտենց ա ասի, գէ վէ յուու ըլենք: գնացինք մերին մի-մի փոնըքի դկեանանկ կարեցինք, կալանք ծեռներիս յուու ընդանք: Արկը փերի պըցըրացել էր, հէս էս ա հաւահասինք Սանահնայ ծորը, մին էլ տեսնիմ մեր Սոսի աղէն քեօնլան ծի նստած զալիս ա. հէս ինձ տեսաւ, ասեց՝ ադառ ուստի անգութիւնը ասեց, գէ ուստա ջան գիդամ ոչ, գէ էսա որ ասում ես՝ գնանք: Դէ որ ըտենց ա ասի, եսաւշ գնամ մեր պըպական սազը պիրեմ: գնացի մարաքիցը մեր պըպական սազը պիրեցի, ուզեցի սընզունուց գէնեմ փորը, տեսա, աղբաթիխեր սազի փշէնին բոշացել ա. ասի ա Ալէքսան, էս սազը մարաքումը մշա մնացել ա, որ փշէնին բոշացել ա, ասը մի սաթ Ալէքսանին հարսին տու, ասա ուստէն ասեց մի էս սազի փշէնին պընդըցըրու: Ալէքսանի հարս որնին Ալէքսանի ձեռիցը ասել էր սազը փշէնց էր պընդըցըրել ոնց որ տէրտէրի երեմի կաշի: Մին էլ էս տեսնիմ Ալէքսանը պիրեցի, վերեց գնացինք գնացի փորը, ծէսս զէնցիցի քեալուկ ասի. այ մանըմ բաշըմ, սանըն Զըզաբէկա

ԸՆԹԵՐՑԱՍՔԻՐԸ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ



Յարմար տեղ է գտնլ, որ ոչոք իրեն շխանգարէն.

զուրբան էլա, մանըմ հունարլի աթըմ օղ-
րէիփտյար, կիսիտ մեռնիմ թափ մանա
վեր; Աղա ասեց, սանըն աթն նա թահը
հունարը վարիդի: (Այստեղ նորից կրկնում
է գովասանքը):

Ա'գա ասեց, օ աթօլմամիշ, օ բըզըմ
Ռոստամ Զալըն ուշի օլմիշ. շուռ էկաւ
գեադէն ասեց. ա Մաջլում գնա թվոլիցը
մի ծի պեր, տու ուստին, սա լաւ աշուղ ա:

Գեադէն գնաց թվոլիցը մի ծի պերեց,
տեսայ իմ ծին չի, ասի ա բաշնդա գօնում,
ախըր էս իմ ծին չի, իմ ծին լաւ ծի էր
(սկսում է ըստ առաջնուն գովել): Աղա ա-
սեց չոխ տանըշմա էրմանի օղուլ էրմանի,
ինդի բաշն քեասարամ: Տեսայ որ գըզազա-
ծա մեր քարւասրա գզը դայդի, ասի՞ ա
Աղքասան ես զասըդի չեմ ու չում են անում
համա գու նօխտակոթիցը դայիմ չաթի: Ոնց
որ ըլաւ հըյեաթից տում էկանք, նստեցինք
ծին գնացինք թուշ Շուլաէր: Գնացինք մի
տան վեր էկանք. սազըս կալա ծեռս, փչէ-
նին պընդցը սընդարնդոցը գձեցի փորը.
մին էլ էս տեսնիմ սեակոլու մի կնիկ դուս
էկաւ ասեց, ուստա քմատազ. ըստի ածիլ
չի ըլի Ասի խի՞ որ: Ասեց կլմաւորս նոր ա
մեռել: Ասի, բա որ ըտենց ա, անըմը ասա,
մի լաւ քիւրդ բայաթի ասեմ: Ասեց՝ անը-
մը Քիքոր էր:

Ծէսս գձեցի քեալէս ու ասի. Քիքոր
ջան հէյ Քիքոր ջան, հէյ Քիքոր ջան, հէյ.
էն որ գնէինք ախպըհարի ծերին նստէինք
ա Քիքոր ջան, հէյ Քիքոր ջան. զըլլան
պկուն փչէինք, ա Քիքոր ջան. քըմրա զո-
ճէնին պապար-պապար անէին ա Քիքոր
ջան. հէյ Քիքոր ջան, մենձերը խոս գի-
դէին, պստիկներն էլ մաթ մնէին. ծուռիկ
կոպալիտ մատաղ, ծակ-ծակ տրխներիտ
մատաղ, Քիքոր ջան, Քիքոր ջան, Քիքոր
հէյ հէյ Քիքոր ջան, էն դից մի պա-
ռաւ կնիկ ասեց. վայ է, քու մէրը մեռնի:
Մին էլ էս տեսնիմ հարսը ծէնը զլուխը
գձեց ու ասեց (եղանակով), Քիքոր ջան, հէյ
Քիքոր ջան, հէյ Քիքոր ջան. ըրենէկ էն
ծօօօրը որ ըուաւուա ծէքին գնսւմ ինք մեր
բաղը, մին էէէլ էն տեսնինք մեր գեղի
զրադին մի դառած շուն ա գալի, հէյ Քի-
քոր ջան (թիւ) ասեց ա կնիկ, էս ըլաւ ոչ,
մենք ըմբուակիտուկ կլինք, գնա մեր զը-
րարինին, մեր թվանչէն, մեր շըշմանչէն,
մեր բախչէսարայցին պի. էն հադաղին
գնացի պիրեցի. (ձայնով) ոոոր կալաւ ձե-
ռը սըմախար գձեց ոչ, մին էլ էս տեսնեմ
մեր կուրած եղանի պոչը մնաց ձեռին վայ
է Քիքոր. ջան Քիքոր ջան վայ:

Էն զրադիցը մի հիւոր ասեց՝ բոլա հար-
սի բոլա. մչա լաց ըլանք քուացանք: Հար-
սը ասեց, ոնց թէ բոլ ա, իւղատար եմ ըլել
ոնց թէ բոլ ա ու ասեց: (Ձայնով) Մին
էէէլ էն տեսնիմ մեր փէթակի տակին մի
զադ ա փէյդահ ըլել, (թիւ) գիդամ ոչ, առչ
ա, գիդամ ոչ գէլ ա, գիդամ ոչ ջընաւար
ա, ասի ա մարթ, էս ի՞նչ ա, ասեց էս ըլաւ
ոչ, գնա մեր թվանք ասպարը պի, (ձայ-
նով) ոոոր գնացի պիրեցի, կալաւ ձեռը

սմախառը գձեց ոչ. մին էլ էս տեսնիմ,
ակուլքինի տակուլքինի, պըպըքինի տան-
ձըքինի ճղոպըքինի սրկելքինի ծառերը
կուրատելով գազնը վեր գազնը վար
քամարերը ճարթ ու փշուր անելով կորաւ
գնաց, օչովի գիւմանը լաւ չէր, էլի Քիքորի
գիւմանը լա, էր, (թիւ) ասեց ա ըմբուակի-
տուկ ըլեք, իւղատար ըլեք, որ դուք էք,
(ձայնով) Էէէս խոմ սարի փորթ ա ըլել
վայ է, ա Քիքոր ջան, վայ: էն էր ծէնս
ուզումի գձեմ քեալիս մին էլ զեմ բա-
յաթ քիւրդին հիւորը թողաց ոչ, ուստա
ասեց էլ բոլա. մեզանըմ հարաքեաթ մնաց
ոչ, Հըղարծինը սիրես բոլ ա՝ գնաց մի սօ-
մար ցորեն դուս պիրեց ածեց, ծիւ թորբէն
կիսէն ընդաւ:

Գիւրատաս

— Պարոն, չէ՞ որ դուք «արբեցողութեան» գէմ
մաքառող հասարակութեան» անդամ էք. ըայց ինք-
ներդ օղի էք խմում:

— Այո, միայն ես տկարութեանս պատճառով եմ
գործածում:

— Ի՞նչ է ձեր տկարութիւնը:

— Ճշմարիտն ասած, ես ինքս էլ չգիտեմ. ամեն
առաջա զլուխս ճաքում է:



Անտառական պատճեան գույն

— Երեկ ձեր անտառում՝ այսպիսի գրաշամբը գի-
շերները շատ բախտաւոր զոյգեր են գրանում:
— Այո, սակայն նրանցից շատերն էլ—շատ ան-
րազ հետականքների են համեմում:

Լիլիպուտի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՍԻԿԵՖ կ յունիսի 19—20-ին

ՄԻ ԶԵՐԱԳԻՐ ԲՐՈՅԻՒՐ

Մ Ա Ր Ա

Գանողին խնդրում են թողնել «Խաթարա-
լա»-ի խմբագրատանը, գոհացուցիչ վար-
ձատրութեամբ: 10—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

Հիւանդներ ընդունելու է, ըստ
սովորութեան մայիսի 25-ից մին-
չև սեպտեմ. 10

Կ Ր Ս Վ Ա Վ Ո Վ Ա Կ Ո Ւ Մ

ՕՏԵԼ ԲԵՇԱՍՈՒ

(օ. մ.) 20—20

Ա Տ Ր Պ Ե Տ ՝

1. Մամեդ-Ալի-Շահ

Հարուսաց առաջնորդ

ՎԵՆ 1 ՐՈՒ.

2. Ռահիմ-Խան

Հարուսաց առաջնորդ

ՎԵՆ 20 ԿՈՊ.

Յանձնաւութեան առաջնորդ

10—9

Ա Տ Ր Պ Ե Տ ՝

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՑԻՒՄ է

Ե. ՅԱՍՈՒՐԵԱՆԻ

■ ■ ■ Դ Ե Պ Օ Յ Ա Կ Ո Ւ Մ ■ ■ ■

որտեղ և վաճառուում է գործարանային գներով:

Թիֆլիս, Դվորցովական փողոց:

50—3

ԼԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ
ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեզվիաներ «ՊԱՍ-ՀԱՅ» են ՈՒՑԻԾԻԱՅ ՃԱՇԻ» ինքնուղուցման համար. մօտ 1000 բէցէպտ կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպոտի, մուրարաների քաղցրեղների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախով վերադիր վճարով 2ր 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համելու ու մննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ռ. 20 կ., երկու գիրքը միասին 3 ռ. 35 կ. (Կարելի է մարկաներով). պահանջներով գիմն բացառապէս Յ. Կ. Պետերս, Ս.-Պետերբուրգ, Պետերբուրգ. կողմանը ճանապարհածախով ու վերադիր վճարով Ն 56—609, 483 0—12 (հ. հ. 2.)

ԲՈԼՈՐՈՎԴԻՆ

!! ԶԼԿԱՆ ԱՅԼԵԽՍ ՀԻՒԱՆԴԱՆԵՐ !!

Եթէ Դուք հիւանդ էք սփիլիսով, արի պէրով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայլած է օնանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկաբան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միզասեռական օրգանների», նկարներով և բազմաթիւ բէցէպտներով մօտ 250 երես: Գինը ճանապարհածախով ու վերադիր վճարով 1 ռ. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկաբան-ձեռնարկ», չափահանների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ռ. 40 կոպ.: Երկու գիրքը միասին 2 ռ. 50 կոպ. (Կարելի է մարկաներով): Միակ պահանտը Ս.-Պետերբուրգ, Պետերբուրգ. կողմանը ճանապարհածախով ու վերադիր վճարով Ն 56—609, 484 0—12 (հ. հ. 2.)

40 օր! ԶՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չեք սովորի պատ խօսել, կարդալ և գրել գերմաններէն, ֆրանսներէն, անգլիերէն և լատիններէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկամ են), ՓՈՂՔ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Մի ձեռնարկի գինը ճանապարհածախով վերադիր վճարով արժէ 1 ռ. 10 կոպ., երկուսը—1 ռ. 90 կ., երեքը—2 ռ. 80 կ., չորսը—3 ռ. 65 կ.: Պատւէրները կատարում է միակ պահանող ամբողջ Խոսասամնի համար: Ս.-Պետերբուրգ, Պետերբուրգ. կողմանը ճանապարհածախով ու վերադիր վճարով Ն 56—609, 482 00—12 (հ. հ. 2.)

ՅԱՄՅԵՑՈՅ ՅՈՒՅՈՒՅ



ՊԵՐԵՈՅ ՌԵՍՏՈՐԱՆЪ „ԱՀՆՈՆԱ“



„Յանուարի Արտիստիկ Ասունցիոն Ակադեմիայի շենքում առաջարկութիւնների համար պահանջներու մասին“

Սօդ. Յ. Տ. Բոնդարենկո

Եжедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играеть вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвцъ—г.-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управлениемъ САККО.

— З А В Т Р А К Ь

отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азиатская; биллиарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ

„ԱՀՆՈՆԱ“

25—14

ՊԵՍՏՈՐԱՆ ԴԱՅԱՐԱՆ „ԴԻԼԻ ՊՈՒԶՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան

Քարվանսարայի տակ

ՄԻԱՅ ՇԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Երովական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կարինետ-սենեակներ մաքուր խոնացող ու պատրաստակամ ծառաներ

25—14

— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է —

Ն Ա Բ - Ի Ո Ջ

ՊԱՅՖԱՐ


Վ Ե Պ

Գինը է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Դուտտենըերգ» գրախանութում, ուր և գիմում են գումարով գնողները:



Գիղերում



Քաղաքներում